h.2120935
17-07-2026թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ՍՈՖՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԼՈՌԻ, 2021, ՎԱՆԱՁՈՐ,*
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ Փ., 71, 32
sofipetrosyan5@gmail.com : 37477930579

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի ժամանակավոր կացարաններում (փայտաշեն շենքերի բնակարաններ) բնակվող անձանց բնակարանային ապահովման գործընթացի վերաբերյալ։

Մասնավորապես, խնդրում եմ նշել, թե

- որ իրավական ակտով է կարգավորվում նշված թաղամասի ժամանակավոր կացարանների բնակիչների շահառու ճանաչվելու գործընթացը և բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակների ձևավորումը.
- արդյոք առկա են իրավական հիմքեր կամ նոր ծրագրեր այն քաղաքացիների համար, ովքեր դեռևս փաստացի բնակվում են Աշոտաբերդ թաղամասի փայտյա շենքերի բնակարաններում, սակայն նախկինում չեն դիմել շահառու ճանաչվելու համար.
- ինչ ընթացակարգով պետք է քաղաքացին դիմի շահառու ճանաչվելու համար.
- որոնք են այն հիմնական չափորոշիչները, որոնցով որոշվում է քաղաքացու՝ շահառու ճանաչվելու և նշված թաղամասում նոր կառուցվող շենքերում բնակարան ստանալու իրավունքը։

Կից ներկայացվում է՝

Փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը.

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության

տրամադրման համար:

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ՍՈՖՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ